— Ամենապատուական մարդ է, բարի, առաքինի, ժողովրդասէր, աշխարհաշէն, մի խօսքով, թէ՛ իբրեւ մարդ, եւ թէ՛ իբրեւ երկրի կառավարիչ, անգնահատելի է, իր նմանը չունի: Նա բոլորովին հիացած է ձեզանով, պարոն բժշկապետ, նա ձեզ Լողմանի հետ է համեմատում. ձեր սակաւաժամանակեայ բժշկութիւնը թէ՛ փաշայի վրայ եւ թէ՛ նրա որդու վրայ մեծ օգուտ է բերել: Քանի օր նրա մօտ էի, միշտ ձեզ վրայ էր խօսում, եւ միշտ այն էր հարցնում, թէ ինչո՞վ կարող է երախտամատոյց լինել ձեզ:

— Ես նրան մի մեծ ծառայութիւն չեմ արել, — պատասխանեց Ասլանը, — բայց պատրաստ կը լինէի, եթէ իմ ժամանակը ներէր, աւելի մեծ ծառայութիւններ անել, որովհետեւ նա արժանաւոր մարդ է, եւ մանաւանդ որ դուք այդքան գովում էք:

— Ճշմարիտ է, արժանաւոր մարդ է եւ գովութեան արժանի է, — կրկնեց սրբազանը:

— Ուրեմն ժողովուրդը պէտք է շատ գոհ լինի մի այդպիսի լաւ կառավարչից:

— Ժողովուրդը չափազանց գոհ է, մանաւանդ քրիստոնեաները: Բայց...

Վերջին բառը արտասանելու միջոցին սրբազանի աչքը ընկաւ իմ երեսին, եւ նա ընդհատեց իր խօսքը: Ասլանը, այդ նկատելով, ինձ նշան արեց, որ հեռանամ: Ես դուրս եկայ նախասենեակը եւ նստեցի դռան մօտ: Նրանց խօսակցութիւնը պարզ լսելի էր եւ այնտեղ:

— Դուք մի բան էիք ուզում ասել, սրբազան:

— Այո, այն էի ուզում ասել, որ ժողովուրդը չափազանց գոհ է, մանաւանդ քրիստոնեաները: Բայց մեր մէջ այժմ դուրս են եկել մի տեսակ խենթ ու խելառ նորելուկներ, որոնք, ամենայիմար ցնորքներով ոգեւորուած, ազատութեան հրապոյրներով յուզմունքներ են յարուցանում ժողովրդի մէջ եւ միամիտներին մոլորեցնում են: Եւ այդ՝ երիտասարդութիւն կոչուած, ցնորամիտ փոքրամասնութիւնն է, որ դժգոհ է տիրող կառավարութիւնից: Ցաւալին այն է, որ նրանց դժգոհութիւնը արտայայտւում է այնպիսի ապօրինի եւ յանցաւոր եղանակներով, որ, ոչինչ լաւ արդիւնք չունենալուց յետոյ, մեծամեծ վնասների եւ կորուստների պատճառ է դառնում:

— Որպիսի՛ վնասներ, — հարցրեց Ասլանը:

— Այդքանն էլ մեծ վնաս եւ մեծ կորուստ պէտք է համարել, պարոն բժշկապետ, որ մենք կորցնում ենք մեր բարեխնամ կառավարութեան աչքում մեր հաւատարմութիւնը, որ ստացել ենք կարեւոր, անձնանուէր ծառայու-